ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

Երևան, Բաղրամյան 19
Հեռ 011-513-288

31.05.2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սիմոնյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածների՝ որպես օրենսդրական նախաձեռնություն, Ձեզ ենք ներկայացնում <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Նարեկ Զեյնալյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը,

դ) նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝ ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ
ԼԻՍԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

## «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը <<հեղուկ>> բառից հետո լրացնել <<, լիազոր մարմնի կողմից սահմանված դեպքերում,>> բառերով:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**<<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության**

1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.** «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է գործող օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում արձանագրված՝ կենդանության օրոք մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգան և (կամ) հյուսվածք և (կամ) հեղուկ ձևաբանական հետազոտության ենթարկելու պահանջի պարտադիր լինելու հանգամանքով:

Այսինքն, գործող օրենքում՝ մարդու, կենդանության օրոք, մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ հյուսվածքի ձևաբանական հետազոտության ախտորոշման պարտադիր լինելը որոշակի դեպքերում առաջացնում են ավելորդ դժվարություններ:

Մի կողմից, պարտադիր լինելու հանգամանքը բացատրվում է նրանով, որ ներկայումս կյանքի ընթացքում ձևաբանական հետազոտությունների դերն օրեցօր մեծանում է հաշվի առնելով կենսանյութի, վիրահատական նյութի պաթոհիստոլոգիական մեծածավալ ուսումնասիրությունները, մեծ նշանակություն է տրվում պաթանատոմի մասնագիտական առավելագույն ճիշտ ախտորոշումը՝ կիրառելով ախտորոշման ճիշտ ու ժամանակակից մեթոդները՝ ընդունված չափանիշներով և համագործակցելով կլինիցիստների հետ:

Մյուս կողմից, ցանկացած դեպքում մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ հյուսվածքի ձևաբանական հետազոտության պարտադիր լինելու հանգամանքը առաջացնում է հավելյալ ծախս, առավել ևս, հանգեցնում է ավելորդ գործողության՝ հեռացված օրգանի երկու տարի ժամկետով պահպանություն: Բժշկագիտության տեսակետից բոլոր դեպքերում մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ հյուսվածքի ձևաբանական հետազոտության պարտադիր լինելը արդյունավետ չի համարվում: Այսինքն, վերը նշված գործընթացը պարտադիր սահմանելը, բոլոր դեպքերի համար, ոչ նպատակահարմար է:

2. **Ակնկալվող արդյունքը.** «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է միայն լիազոր մարմնի կողմից սահմանված դեպքերում պարտադիր դարձնել մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգանի կամ հյուսվածքի ձևաբանական հետազոտությունը:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամների կողմից: Նախագիծը քննարկվել է ՀՀ-ում գործող լիցենզիա ունեցող ախտաբանաանատոմիական գործունեություն իրականացնող ներկայացուցիչների հետ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### <<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ նոր օրենքների ընդունման անհրաժեշտություն չի առաջանա: Անհրաժեշտություն կլինի փոխել 2021 թվականի մարտի 4-ի ՀՀ կառավարության թիվ 288-Ն <<Ձևաբանական հետազոտությունների ցանկը և անցկացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> որոշումը:

# ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 41. Ախտաբանաանատոմիական գործունեությունը**

1. Ախտաբանաանատոմիական գործունեությունը բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որն իրականացվում է ձևաբանական հետազոտությունների և ախտաբանաանատոմիական դիահերձումների միջոցով:

2. Ձևաբանական հետազոտություններն իրականացվում են կենդանության օրոք հիվանդությունների ախտորոշման նպատակով: Կենդանության օրոք մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգան և (կամ) հյուսվածք և (կամ) հեղուկ, <u>լիազոր մարմնի կողմից սահմանված դեպքերում</u>, ենթակա է պարտադիր ձևաբանական հետազոտության ախտորոշման ճշգրտման, հաստատման, բուժման արդյունավետության գնահատման նպատակով: Ձևաբանական հետազոտությունների ցանկը և անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Ախտաբանաանատոմիական դիահերձումներն իրականացվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով, միայն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպություններում:

Ախտաբանաանատոմիական դիահերձումների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Ախտաբանաանատոմիական դիահերձումները կարող են չիրականացվել՝ հիմք ընդունելով մահացածի՝ կյանքի օրոք հայտնած կամքը կամ ծնողի կամ ամուսնու կամ երեխաների կամ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը, բացառությամբ

1) *(կետն ուժը կորցրել է 04.03.22 ՀՕ-45-Ն)*

2) վարակիչ հիվանդությունների և Կառավարության հաստատած՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկի առկայության կամ դրանց կասկածի դեպքում.

3) նորագոյացություններից մահվան դեպքում, երբ բացակայում է դրանց հյուսվածաբանական հաստատումը (վերիֆիկացիան).

4) շուրջծննդյան (պերինատալ) մահացության դեպքում:

5. *(մասն ուժը կորցրել է 04.06.21 ՀՕ-262-Ն)*

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձանց բացակայության դեպքում պարտադիր կարգով իրականացվում է դիահերձում:

7. Ախտաբանաանատոմիական դիահերձում չիրականացնելու դեպքում կարող են իրականացվել դիակի խնամքի, մշակման (դաբաղման) և պահպանման ծառայություններ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

*(41-րդ հոդվածը փոփ. 04.06.21 ՀՕ-262-Ն, փոփ., լրաց., խմբ. 04.03.22 ՀՕ-45-Ն)*